ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Ռուսաստանի Դաշնություն/Մոսկվա/12.12.2019թ.

- **Նպատակը**

Մասնակցել Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների աշխատանքային հանդիպմանը

- **Քննարկված թեմաները**

Հանդիպմանը ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

Եվրասիական տնտեսական միության ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների հետ աշխատանքային հանդիպումների արդյունքների մասին որոշումների իրականացման ընթացքի վերաբերյալ (Դ. Բ. Բայժումանով)

Եվրասիական տնտեսական միության թվային տնտեսության վիճակագրության ստեղծման մասին (Յու. Կ. Շոկամանով)

Եվրասիական տնտեսական միության վիճակագրությունում վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակման (SDMX) կիրառությունն ընդլայնելու մոտեցման մասին (Յու. Կ. Շոկամանով)

Եվրասիական տնտեսական միության տարածքում միջտարածաշրջանային համագործակցությունը բնութագրող վիճակագրական տեղեկատվության ձևավորման մասին (Պ. Ի. Դոլգոպոլով)

Եվրասիական տնտեսական միության վիճակագրական տվյալների ձևավորման և տարածման մասին, որոնք արտացոլում են կայուն զարգացման նպատակների ձեռքբերումը մինչև 2030 թվականը (Պ. Ի. Դոլգոպոլով):

- **Արդյունքները**

Մասնակցությունը հանդիպմանը հնարավորություն ընձեռեց հարցադրումներով պարզել առավել մանրամասնեցված փաստարկներ օրակարգով առաջարկվող հարցերի վերաբերյալ և, անհրաժեշտության դեպքում ներկայացնելով հակափաստարկներ, ապահովել ավելի խորքային քննարկում մինչև վերջնական որոշումների ընդունումը:

Օրակարգի 5-րդ հարցի ներքո ներկայացրեցի Արմստատի կողմից մշակված Կայուն Զարգացման Նպատակների (ԿԶՆ) ցուցանիշների համար Ազգային հաշվետվողականության հարթակը (ԱՀՀ) (http://sdg.armstat.am/), որը մշակվել է Արմստատի կողմից Բաց Տվյալների Ձեռնարկության համար Կենտրոնի (ԱՄՆ) տվյալների գիտնականի օժանդակությամբ՝ ուսումնասիրելով ԱՄՆ-ի ԿԶՆ-ի ցուցանիշների համար ԱՀՀ-ն մշակելու փորձը և ուսուցողական նյութերը և մեկնարկվել է 2019թ. սեպտեմբերի 17-ին:

Այս հարթակը հանդիսանում է ազգային վիճակագրության, մեթատվյալների և հարակից տեղեկատվության գործիք՝ գլոբալ ԿԶՆ-ի ցուցանիշների համար:

ԱՀՀ-ն ազգային վիճակագրության տարածման և հաշվետվողականության գործիք է գլոբալ ԿԶՆ-ի ցուցանիշների համար, որոնք ապահովում են ԿԶՆ-ի նկատմամբ առաջընթացի մշտադիտարկման շրջանակը: ԱՀՀ-ն համադրելի է, ժամանակին, թափանցիկ և հրապարակայնորեն մատչելի ու սպառողի համար հարմարավետ: ԱՀՀ-ի հատկանիշները՝ ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներին և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքներին համապատասխանելու համար.

- կառավարվում է Արմստատի կողմից,
- պարունակում է պաշտոնական վիճակագրություն և մեթատվյալներ,
- ընձեռում է հետադարձ կապի հնարավորություն սպառողների համար:

Ներկայացրեցի նաև ԱՀՀ-ի (https://armstat.github.io/sdg-site-armenia/) ստեղծման և գործարկման Հայաստանի օրինակը "Հայաստան – Բաց ԿԶՆ-ի ուսումնասիրության օրինակ", որը զետեղվել է Բաց Տվյալների Ձեռնարկության համար Կենտրոնի "Բաց ԿԶՆ-ի հանրություն/փաստաթղթավորում" հատվածում (https://open-sdg.readthedocs.io/en/latest/case-studies/armenia)՝ առաջարկելով մասնակից երկրներին ստեղծելու նմանատիպ հարթակ:

Մասնակցությունը հանդիպմանը նաև հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարներին ծանոթանալու Եվրասիական

տնտեսական միության ազգային վիճակագրական ծառայությունների վերջին զարգացումներին, կիսելու իրենց խնդիրներն ու փորձերը, ինչպես նաև քննարկելու մեթոդաբանական հարցերն ու գործողություններն ուղղված ազգային վիճակագրական համակարգերի հետագա կատարելագործմանը:

- **Նշումներ**

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

ՀՀ վիճակագրական կոմիտեի
նախագահ Ս. Մնացականյան